# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ №88/11-Ռ «08» 05 2024թ.

**2024/2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ «ՖԱՐՄԱՑԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԴԵՂԵՐԻ ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայի (առկա և հեռակա ուսուցման ձևերով) ընդունելության կարգի» 17-րդ կետը, Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի զեկուցագիրը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. 2024/2025 ուսումնական տարում ԵՊՀ «Ֆարմացիա» մասնագիտության «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսական կրթական ծրագրի առկա ուսուցման ձևով 2-րդ փուլի ընդունելության համար հավելյալ պարտադիր պահանջ սահմանել դիմորդի՝ «Ֆարմացիա», «Դեղագործական քիմիա», «Դեղագործություն», «Բուժական գործ», «Ստոմատոլոգիա», «Քիմիա», «Ֆիզիկա» և «Կենսաբանություն» մասնագիտություններով բակալավրի բազային կրթության առկայությունը:
2. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ ֆակուլտետներին/ինստիտուտներին/կենտրոններին:

Ռեկտոր՝ Հ. Հովհաննիսյան